# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am


№ 01/07-71748Ն «15» 08 2019թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան

Ձեր 30.07.2019թ 01/17-2/10089-19 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2020 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Առաջարկում եմ որոշման նախագծի N 2 հավելվածի՝

1) 9-րդ կետի 4-րդ սյունակը «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախախարություն» բառերից հետո լրացնել «ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)» բառերով,

2) 18-րդ կետի 4-րդ սյունակից հանել «Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)» բառերը:

Միաժամանակ, համապատասխան միջոցառումների ծրագրում առաջարկում եմ ներառել ևս մեկ միջոցառում հետևյալ բովանդակությամբ.

«Պետական պատվերի շրջանակներում, ինչպես նաև շահագրգիռ գերատեսչությունների, կազմակերպությունների /այդ թվում և հասարակական կառույցների/ միջոցով փողոցներում, հասարակական մարդաշատ վայրերում տեղադրել սոցիալական պաստառներ՝ թմրամոլության և թմրամիջոցների կործանարար հետևանքների կանխարգելման թեմաներով»:

Հարգանքով՝

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Իրավաբանական վարչություն
Կատ. Հ.Թունյան, Կ.Դանիելյան. հեռ.011-514-175

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 09/20377-19
«16» 08 2019թ.